FOCUS

Արվեստի կրթական տարածք և գրադարան

Պրեզենտացիա
2018

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Ֆոկուս արվեստի ՀԿ-ն հիմնվել է 2016–ին Երևանում՝ 2003–ից գործող «Ուտոպիանա.ամ» մշակութային–ստեղծագործական ՀԿ–ի փոխակերպումների և տարանջատման արդյունքում:

Ֆոկուսը Երևանում գործող արվեստի տարածք է՝ տարատեսակ միջոցառումների, հանդիպումների ու զրույցների վայր, որի գործունեությանը նպաստում են նորագույն տեխնիկական միջոցները, համախոհների, գործընկերների, և ընկերների մեծ ցանցը, և հարմարավետ գրադարան-ընթերցասենյակը:

ՄԵՆՔ

Արվեստի և կրթության վերաբերյալ մեր համոզմունքները ձևավորվել են փլուզված խորհրդային միության ու չձևավորված նոր (կրթական) համակարգերի արդյունքում, ակադեմիական, այլընտրանքային և ինքնակրթական փորձառությունների միջոցով: Կազմակերպությունը հիմնադրել են՝

Վահե Բուդումյանը
նկարիչ, ձևավորող
լուս. հեղինակ՝ Ալեք Լեվասգանի

Նորա Գալֆայանը
արվեստի մենեջեր
լուս. հեղիակ՝ Արմենակ Գրիգորյան

Դավիթ Ստեփանյանը
ռեժիսոր, արվեստագետ
լուս. հեղինակ՝ Անի Գևորգյան

ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Մենք դիտարկում ենք արվեստը որպես զորեղ սոցիալական գործիք, և կիրառում ենք ժամանակակից արվեստի պրակտիկաները մշակութային, հասարակական-քաղաքական փոխակերպումները հարցադրելու համար՝ դրանով իսկ ուրվագծելով արվեստի նոր տիրույթներ:

Մենք հռչակում ենք (ինքնա) կրթությունը որպես առաջնային ռազմավարություն, որպես հնարավորություն՝ հասկանալու ընդհատված և ընթացող հասարակական-քաղաքական պրոցեսները, և նախապայման՝ ձևավորելու սեփական օրակարգ:



Ֆոկուսի ժամանակագրությունը

Ֆոկուսն այժմ զարգացնում է երեք ընթացիկ նախագիծ՝
Մեդիալաբ, ACTV և Գրադարան / Libraries.am.

ՄԵԴԻԱԼԱԲ

Յուրաքանչյուր տարի Մեդիալաբի միջոցով Ֆոկուսը համախմբում է երիտասարդների և ուսուցանում կիրառել ժամանակակից արվեստի այն պրակտիկաները, որոնք հասանելի չեն Հայաստանի մյուս կրթական հաստատություններում ու հարթակներում:

Մեդիալաբը եզակի է, քանի որ արվեստի կրթություն տրամադրող միակ անվճար կրթական օջախն է, որն «արտադրում» է արվեստագետներ, ապահովում է տեղական արվեստի միջավայրերի հետ նրանց անմիջական կապն ու ներգրավվածությունը, նախագծեր իրականացնելու համար տրամադրում է տարբեր գործիքներ ու հարմարություններ, օգնում է նրանց մասնագիտանալ և աշխատել Հայաստանի ժամանակակից արվեստի հաստատություններում:

Մեդիալաբի ուսանողները ձայնային արվեստի վարպետության դասի ժամանակ «նվագում են» խողովակներով

Մեդիալաբ դիմորդների քանակը՝ ըստ տարիների



Որպես փորձնական կրթական ծրագիր Մեդիալաբը մեկնարկել է 2007-ին՝ ընդամենը մի քանի դասընթացով: Ներկայումս այն վեցամսյա ծրագիր է, որը ներառում է շուրջ 10 առանձին դասընթաց՝ ժամանակակից արվեստի, լուսանկարչության, դիզայնի, ստեղծագործական գրության, ձայնային արվեստի, ֆիլմի, մոնտաժի և այլն, որոնք վարում են համապատասխան ոլորտների լավագույն մասնագետները:

Այս 10 տարիների ընթացքում, ի տարբերություն այլ արվեստի կրթական նախագծերի՝ Մեդիալաբը ոչ միայն գոյատևել է՝ հաղթահարելով նվազագույն կամ ոչ կայուն ֆինանսավորման խնդիրները, այլև գրանցել է հետևողական զարգացում, և լայն ժողովրդականություն է վայելում երիտասարդ և ուսանող արվեստագետների շրջանում:

ՄԵՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Մշտապես ընդլայնվող դասընթացների ցանկ

Այսօր դասավանդում ենք շուրջ ***10*** հիմնական դասընթաց, որոնց մեծ մասը հասանելի է ***միայն Մեդիալաբում:***

Երիտասարդ լավագույն մասնագետ դասընթացավարներ

որոնք իրենց գիտելիքն են ներդնում ծրագրի և ***այլընտրանքային կրթության զարգացման*** գործում:

Տեղական ու միջազգային համագործակիցների մեծ ցանց

մենք պարբերաբար հրավիրում ենք մեր գործընկերներին՝ վարպետության դասեր եւ հանդիպումներ անցկացնելու Մեդիալաբի ուսանողների հետ:

Հայաստանի արվեստի դաշտում ներգրավված շրջանավարտներ

մեր ուսանողները հաջողությամբ համագործակցում են տեղական ժամանակակից արվեստի հաստատությունների եւ արվեստագետների հետ:

Տեխնոլոգիական հագեցվածություն եւ մասնագիտական գրադարան

մեզ հաջողվել է ստեղծել եզակի մասնագիտական գրադարան, համալրված ոլորտին վերաբերող գրականությամբ, եւ ձեռք բերել անհրաժեշտ բարձորակ տեխնիկա՝ նկարահանումների, մոնտաժի, լուսանկարների երեւակման եւ տպագրման համար:

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

իրենց գիտելիքները կիրառում են արվեստի ամենատարբեր ոլորտներում, իրենց ուղին հարթելով որպես **լուսանկարիչներ, արվեստագետներ և արվեստի խմբեր, արվեստի մենեջերներ, արվեստի լրագրողներ,** ինչպես նաև, իրականացնելով **ոլորտային թրագմանություններ**:



«Լարովի նարինջ», ֆոտոգրամ, Աննա Սախլյան

«Լույս գողացողը», ֆոտոգրամ Շուշան Խաչատրյան

Սկանանկարներ, Հոլլի Արմենակյան

«Անվերնագիր», արծաթ-ժելատինային տպագրություն, Լիլիթ Միկոյան

Բացօթյա նկարահանումներ՝ օպերատորական դասընթացի շրջանակում

Օպերատորական դասերի շրջանակում ուսանողները հյուրընկալվել են Բուն TV-ում

Լուսանկարչության ավանդական տպագրության արվեստանոց

Ձայնային արվեստի վարպետության դաս

Մեդիալաբի ուսանողները պատրաստվում են տպել և երևակել լուսանկար ավանդական տպագրության միջոցներով

17.06.2017 -8.07.2017

Համադրող՝ Մարիամ Ալեքսանյան
Curator, Mariam Aleksanyan

Մեդիալաբի արդյունքում ձևավորված «Կարմիր» արվեստային խմբի՝ Մեդիալաբի վեց ուսանողների և ՆՓԱԿ–ի համագործակցությամբ տեղի ունեցած Red ցուցահանդեսը, 2017:

Ավելին ցուցահանդեսի մասին



Մարիամ Ալեքսանյան, տարածք/Ալտերնատիվ/«ինչի համար»
Ցուցահանդես, ՆՓԱԿ, 2017

Ավելին ցուցահանդեսի մասին





«Ապակոնտեքստավորում, հեղափոխություն, արվեստ», Օգտատիրոջ փորձառություն
Ցուցահանդես, ՆՓԱԿ, 2018

Ավելին ցուցահանդեսի մասին
Տեսանյութը



Մեդիալաբի ուսանողների մասնակցությունը «Մեկ քառակուսի մետր» թատրոնի և կատարողական արվեստի միջազգային փառատոնին ՆՓԱԿ, 2018

Ավելին փառատոնի մասին

«ՈՉ ԵՍ», «Կարմիր» արվեստային խումբ

Տեսանյութ

Սոնա Մնացականյան, «անՁայն»

Տեսանյութ



ՄԵՐ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Մեր գրադարանը ներառում է ժամանակակից արվեստի, փիլիսոփայության, ճարտարապետության, գրականությանը նվիրված բազմալեզու գրքեր և կատալոգներ: Գրքեր, որոնք մեծամասամբ լույս են տեսել վերջին քսանամյակում և որոնցից շատերը կարելի է գտնել միայն Ֆոկուսի գրադարանում:

Մենք հետամուտ ենք, որպեսզի մեր կրթական ծրագրերը տրամադրեն արվեստի ոչ միայն համալիր, այլեւ հիմնային գիտելիքներ, եւ դրա հետ ենք կապում գրադարանի զարգացման հեռանկարը:

LIBRARIES.AM

Ֆոկուսի նախաձեռնությամբ ստեղծվեց և վերջերս մեկնարկեց libraries.am Անկախ գրադարանների ցանցը, որի նպատակն է ավելի տեսանելի և հասանելի դարձնել ժամանակակից արվեստի, լուսանկարչության, հումանիտար հետազոտությունների եւ հարակից ոլորտերում գործող կազմակերպությունների գրադարանների աշխատանքը, և միաժամանակ ավելի կենտրոնացված և արդյունավետ կազմակերպել գրադարանների և ընթերցողների միջև կապը, նպաստելով ուսանողների, հետազոտողների, այլ մասնագետների ընթացիկ կամ ապագա ուսումնասիրություններին:

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանրային ոլորտի և հասարակայնության միջև
Խմբագիր՝ Վարդան Ազատյան
2015 (հայերեն)



Տարածքներ. Մշակութային հանրային ոլորտը Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում
Խմբագիրներ՝ Նատաշա Բոդրոժիչ և Նինի Փալավանդիշվիլի 2014 (անգլերեն)

Պատկեր-ացնելով հանրայինը. Անկախ մշակութային դերակատարների կարգավիճակը և մարտահրավերները Հայաստանում
Խմբագիրներ՝ Նատաշա Բոդրոժիչ, Նորա Գալֆայան, Թագուհի Թորոսյան 2014 (հայերեն)

Քաղաքատնտեսություն
Ընդհանուր խմբագիրներ՝ Գայանե Մելքոմ Մելքոմյան, Վահրամ Սողոմոնյան, Դավիթ Ստեփանյան
2017 (հայերեն)



ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

INSTITUTE FOR CONTEMPORARY ART YEREVAN

4PLUS

քաղաքական ԴԻՍԿՈՒՐՍ միտքը փոփոխություն է

A|<A ARMENIA

Fundacja Sens Ruchu

Արվեստ Հայաստան ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆեմ գրադարան

Հովհաննիսյան ինստիտուտ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

MIRZOYAN LIBRARY

ԻՆՉՈՒ ԱՋԱԿՑԵԼ ՖՈԿՈՒՍԻՆ

Մենք բարձր ենք գնահատում մեր կրթական ռեսուրսների կայունությանն ու գրադարանի զարգացմանը նպաստող ցանկացած աջակցություն:
Եթե համակրում եք կազմակերպության գործունեությանը և ցանկանում եք աջակցել Մեդիալաբի կամ Գրադարանի զարգացմանը, կապվեք մեզ հետ ստորև նշված միջոցներով:

Վստահ եղեք, որ ձեր ցանկացած ներդրում կնպաստի թե՛ կազմակերպության, թե՛ առհասարակ Հայաստանի արվեստի դաշտի կայացմանը. այդ նպատակով ենք մենք կրթում ակտիվ արվեստագետներ, ովքեր զգայուն են թե՛ արվեստի, թե՛ սոցիալ-քաղաքական հարցերի հանդեպ, սոցիալապես ներգրավված են եւ ունեն քննադատական մտածելակերպ, կարող են քննադատորեն մոտենալ իրենց կիրառած արվեստի գործիքներին:

ՄԵՐ ՈՒՂԵՐՁԸ

Եթե ցանկանում եք աջակցել նախագծին
եւ դառնալ մեր համայնքի մի մասը,
դուք կարող եք հովանավորել Մեդիալաբ 2018- 2019 ուս. տարվա նախագիծը
կամ դրա բաղադրիչները՝ ըստ նախապատվության:

ԴԱՐՁԻՐ ԱՋԱԿԻՑ

ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԱՋԱԿԻՑ

ԳԼԽԱՎՈՐ ԱՋԱԿԻՑ

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԱՋԱԿԻՑ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՋԱԿԻՑ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

info@focus.org.am | Tel: (+374) 55781874 | www.focus.org.am

Facebook Youtube